10.56653/18290361-2025.16-256

Ռուզան Կուրթանջյան
գիտաշխատող
Ալեքսանդր Թամանյանի անվան
ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ
kurtanjyanruzanna21@gmail.com

ԱԼ. ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՖՈՆԴԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ (ՄԻՔԱՅԵԼ ՄԱՉՄԱՆՅԱՆ, ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ, ԹԵԼՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ)*

Հիմնաբառեր. ճարտարապետություն, ժառանգություն, ֆոնդ, թվայնացում, էլեկտրոնային արխիվ, ուսումնասիրություն

Ամբողջ աշխարհում ճարտարապետական թանգարաններն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ այդ հավաքածուների միջոցով հնարավոր է ծանոթանալ հասարակության զարգացման ինժեներական, կոնստրուկտորական, ճարտարապետական և դիզայներական գաղափարների զարգացման, տարբեր ժամանակահատվածներում ճարտարապետության ոլորտում իշխող ոճերին, նվաճումներին և փոփոխություններին: Նմանատիպ հետաքրքիր և կարևոր հավաքածուներ են պահվում նաև Ալեքսանդր Թամանյանի անվան ազգային ճարտարապետության թանգարան-ինստիտուտում: Թանգարան-ինստիտուտի ֆոնդի և արխիվի ստեղծումն ու շարունակական համալրումն ունի ավելի քան 35 տարվա պատմություն: Առաջին թանգարանային նյութերը բերվել են հայ ճարտարապետների մտերիմների կողմից՝ որոշ դեպքերում այդպիսով ուղղակիորեն փրկվելով ոչնչացումից: Կարելի է պատկերացնել, թե որքան բարդ էր թանգարանի սկզբնական կայացման փուլն ուղեկցող աշխատանքը: Հսկայական թվով նյութերի՝ նախագծերի, ճարտարապետական էսքիզների, լուսանկարների, փաստաթղթերի, նեգատիվների և այլ նմուշների համար չկար անգամ համապատասխան պահոց, սակայն փոխարենը կար բարձր գիտակցում՝ այս ամենը սիրով և խնամքով պահելու, ուսումնասիրելու, հաշվառելու անհրաժեշտության, որը հետագայում հանգեցրեց գիտական հոդվածների, գրքերի, հետազոտությունների ստեղծմանը:

Վերջին ժամանակներում ստացված ֆոնդերը կարևոր են մեր թանգարանային գործունեության համար և չափազանց հետաքրքիր են: Հետաքրքրության շրջանակները ծավալուն են և ուսումնասիրության համար հսկայական ներուժ են պարունակում՝ գործող ճարտարապետների, ճարտարապետ-տեսաբանների,

* Ստացվել է 31.07.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 29.08.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ:

ապագա ճարտարապետների և ինչու չէ՝ թանգարանի սովորական այցելուների համար:

2018 թվականին թանգարանը նվեր ստացավ ականավոր հայ ճարտարապետ Միքայել Մազմանյանի ընտանիքից: Այն մեծ և բազմաբովանդակ ֆոնդ է, որը բաղկացած է տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված նախագծերից, լուսանկարներից, անձնական փաստաթղթերից: Միքայել Մազմանյանն իր ստեղծագործական պրակտիկան սկսեց որպես շատ տաղանդավոր ճարտարապետ, որի առջև պետք է բացվեյին բոլոր մասնագիտական հնարավորությունները: Մազմանյանն իր ուսումը ստացել է Մոսկվայի ամենաառաջադեմ համալսարաններից մեկում՝ ***Վխուտեմասում***, որը կարևոր դեր խաղաց նրա մասնագիտական կրթության մեջ՝ զարգացնելով նրա պրոֆեսիոնալիզմը, միաժամանակ մեծ ոգեշնչման աղբյուր դարձավ և ամրապնդեց նրա մտածողության ինքնատիպությունը: Ուսումն ավարտելուց հետո Մազմանյանը վերադարձավ հայրենիք՝ Երևան՝ բերելով նոր մտքեր և գաղափարներ, կանգնելով նոր, հայկական ազգային ճարտարապետության կայացման ակունքներում, ստեղծելով ժամանակակից ճարտարապետական լեզու: Թանգարանին նվիրաբերված հավաքածուի մեջ առկա են Միքայել Մազմանյանի ուսանողական աշխատանքները, նրա դիպլոմային նախագծերը, առաջին կոնստրուկտիվիստական գործերը, որոնք նա իրականացրել էր իր ընկերների հետ Երևանում: Ուսումնասիրողների համար ֆոնդում կան շատ հետաքրքիր նյութեր, քանի որ կոնստրուկտիվիստական շերտը մեր ժամանակակից Երևանում գրեթե բացակայում է, կամ փոփոխված է: Ամենաբուռն ստեղծագործական ժամանակաշրջանում Մ. Մազմանյանը, ենթարկվելով 1937 թվականի բռնաճնշումներին, աքսորվեց Նորիլսկ քաղաք: Բանտում ու աքսորում անցկացրած տարիներին ճարտարապետը շարունակեց աշխատել, կառուցել հավերժական սառույցների վրա և դարձավ Անդրբևեռային քաղաքների կառուցման մեթոդների ու ճարտարապետական ոճի ստեղծողներից մեկը: Նրա ֆոնդում առկա են բազմաթիվ նյութեր, որոնք վերաբերվում են հենց այդ ծանր ժամանակաշրջանին՝ աքսորին վերաբերող փաստաթղթեր, անձնական նամակներ և լուսանկարներ, ուսումնասիրություններ՝ կապված բարդ բնակլիմայական պայմաններում նախագծելու ճարտարապետական պրակտիկայի խնդիրների հետ: Աքսորից հետո՝ Հայաստանում, Միքայել Մազմանյանը շարունակեց բավականին արդյունավետ աշխատել. նախագծեց քաղաքներ, կառուցեց բնակելի թաղամասեր, ստեղծագործեց իր ժողովրդի համար՝ հայրենի հողում: Ֆոնդը ստանալուց անմիջապես հետո թանգարանը սկսեց հետազոտական աշխատանքը, որի նպատակն էր ֆոնդի գիտական ուսումնասիրությունը՝ ըստ ժամանակագրության, ոճի, կատարման և ներկայացման առանձնահատկությունների: Գիտահետազոտական աշխատանքն ավարտելուց և ֆոնդը մշակելուց հետո մեկնարկեցին նախապատրաստական աշխատանքները՝ Միքայել Մազմանյանի հոբելյանին ընդառաջ ցուցահանդեսի բացման համար: Կարևորելով ներկայացնել լայն շրջանակներին Մ. Մազմանյանի ամբողջական ստեղծագործական ուղին՝ թանգարանը նպատակ էր դրել իր առջև՝ ճանաչողականության զարգացման և հետագա խոր ուսումնասիրության համար պայմանների ստեղծման: Միաժամանակ թանգարանում լույս

տեսավ «Միքայել Մազմանյան ճարտարապետ» գիրքը, որտեղ ամփոփվեց Միքայել Մազմանյանի ամբողջ ճարտարապետական գործունեությունը: Ֆոնդային աշխատանքի ամբողջ համալիրի իրականացմանը զուգահեռ ստեղծվեց էլեկտրոնային անձնագրի պիլոտային տարբերակը, և Մազմանյանի բոլոր թանգարանային նմուշներն ունեցան առանձին էլեկտրոնային անձնագրեր, որոնցում ամփոփված է յուրաքանչյուր թանգարանային նմուշի վերաբերյալ համառոտ տեղեկություն: Մոտ ապագայում սպասվում է թանգարանում առկա յուրաքանչյուր թանգարանային նմուշի համար էլեկտրոնային անձնագրերի ստեղծմանն ուղղված աշխատանք, ինչը կնպաստի ճարտարապետական տեսության և պատմության առավել արդյունավետ ուսումնասիրությունների հնարավորությանը: 2018 թվականին սկսված թվայնացման պիլոտային ծրագիրը ստացավ ավելի մեծ ծավալներ և շարունակվում է մինչ օրս: Կարևորելով այդ աշխատանքը՝ թանգարանի անձնակազմը հասկանում է, որ դա միակ հնարավորությունն է պահպանել և փոխանցել ապագա սերունդներին ամբողջական մասնագիտական գիտելիքները, տվյալները և ի վերջո՝ մեր հայ լինելու գիտակցությունը:

2021 թվականին Ալեքսանդր Թամանյանի անվան ազգային թանգարան–ինստիտուտը ստացավ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի ֆոնդը: Ճարտարապետության դոկտոր Լոլա Դոլուխանյանը գրել էր Ռ. Իսրայելյանի մասին՝ «Իսրայելյանին չի կարելի ընդօրինակել, հնարավոր չէ շարունակել, այնքան ինքնատիպ է նա»: Այս բառերի վառ ապացույցն են այն նյութերը, որոնցով համալրվեց թանգարանի ֆոնդը: Ռ. Իսրայելյանի ֆոնդը կազմված է բազմաբովանդակ իրականացված և չիրականացված ճարտարապետական նախագծերից, էսքիզներից, գրաֆիկական դիզայնի նմուշներից: Իսրայելյանը Երևան եկավ 1936 թվականին: Սա այն ժամանակահատվածն էր, երբ կյանքից հեռացել էր Ալ. Թամանյանը և այդ եղելության մեջ, իսկապես, կա մի սիմվոլիզմ, քանի որ, Իսրայելյանը՝ լինելով երիտասարդ, սկսնակ ճարտարապետ, պետք է շարունակեր զարգացնել այն բոլոր ճարտարապետական նվաճումները և մեթոդները, որոնք ժառանգություն էին թողնվել Թամանյանի կողմից: Ռ. Իսրայելյանի ճարտարապետական ձեռագիրն աչքի է ընկնում իր հայկականությամբ: Նրա բոլոր նախագծերում վառ արտահայտված են հայ ճարտարապետության ազգային առանձնահատկությունները: Շարունակելով Ալ. Թամանյանի սահմանած մոտեցումները, սակայն մշակելով լրիվ նոր գեղարվեստական ճարտարապետական լեզու՝ Ռ. Իսրայելյանը ստեղծում է յուրահատուկ աշխատանքներ, որոնք դառնում էն նրա այցեքարտը ճարտարապետական արվեստում: Ազգային էլեմենտները ներգծված են ճարտարապետական հորինվածքներում, գրաֆիկական աշխատանքներում, զարդաքանդակներում և քանդակներում: Ռ. Իսրայելյանը հանդիսացավ նոր ճարտարապետական թեմայի՝ աղբյուր-հուշարձանների ստեղծող: Դրանք տեղադրվեցին Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր քաղաքներում և գյուղերում՝ ի հիշատակ Հայրենական Մեծ պատերազմի հերոսներին: Անսահման սերը և ոգևորությունը դեպի ազգային ժառանգությունն արտահայտվեց ոչ միայն ճարատարապետական նախագծերում, այլև զինանշանների, մեդալների, պետական պարգևների և լոգոտիպների հորինվածքների ու խորհրդանիշների մշակումների մեջ: Աշխա-

տելով տարբեր ճարտարապետական ժանրերում՝ հասարակական, արդյունաբերական, բնակելի, Ճարտարապետական փոքր ձևեր, Ռաֆայել Իսրայելյան ճարտարապետը չի կրկնել ոչ ոքի՝ նույնիսկ ինքն իրեն, ամեն անգամ դարձնելով իր աշխատանքները յուրահատուկ և հիշվող: Այս հարուստ ֆոնդը աչքի է ընկնում իր նյութերի բազմազանությամբ՝ թե բովանդակային առումով և թե կատարման տարբերություններով, ինչը նույնպես հատկանշական է հեղինակի ստեղծագործական կերպարի համար: Մենք տեսնում ենք գծագրեր, նախագծեր, ճարտարապետական էսքիզներ, որոնք կատարված են տարբեր տեխնիկաներով (դասական տուշ, մատիտ), և դրանց հետ մեկտեղ ֆոնդում առկա են նյութեր՝ արված այդ ժամանակաշրջանում նորաձև դարձած ֆլոմաստերի օգնությամբ: Տարիների ընթացքում ձևավորված ֆոնդային աշխատանքների գիտահետազոտական ամբողջ փաթեթը գործի դրվեց, երբ թանգարանը սկսեց մշակել և աշխատել Ռ. Իսրայելյանի ֆոնդի վրա: Արխիվային աշխատանքին զուգահեռ հնարավորություն ստեղծվեց կազմակերպել և ձևավորել մի քանի թանգարանային նախագիծ, որոնցից են՝ «Քար և ջուր. Ռ. Իսրայելյանի ջրաղբյուրները» ցուցադրությունը, «Մայր Հայաստան» արձանի պատմությանը նվիրված ցուցահանդեսը, համատեղ ցուցադրություն Հայաստանի գինու պատմության թանգարանի հետ: Ռ. Իսրայելյանի գունագեղ սպասքի էսքիզների հիման վրա ստեղծվեցին եռաչափ մոդելներ, որոնք հանդիսացան թանգարանի և Ճարտարապետության և շինարարության համալսարանի դիզայնի բաժնի համատեղ նախագիծ, որն իրականացրեցին ապագա երիտասարդ դիզայներները: Նշենք, որ Ռ. Իսրայելյանին պատկանող նյութերի թվայնացման աշխատանքները մեկնարկել են առաջին իսկ օրվանից, սակայն դեռևս կա աշխատանքի ամփոփման անհրաժեշտություն՝ մասնավորապես մեծ չափերի նախագծերի, էսքիզների, թվայնացման ուղղությամբ:

2024 թվականին թանգարանը ստացավ ճարտարապետ Թելման Գևորգյանի արխիվը, ինչը ցանկացած ճարտարապետական թանգարանի համար մեծ պատիվ է: Ճարտարապետ Թ. Գևորգյանը, ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, տարիների ընթացքում ակտիվ զբաղվում էր ճարտարապետական պրակտիկայով՝ կարողանալով արտահայտել իր տաղանդը երեք ճարտարապետական ոլորտներում: Առաջինը՝ նա նախագծող, գործնական ճարտարապետ էր, երկրորդը՝ նա զբաղվում էր հայ միջնադարյան ճարտարապետական հուշարձանների մոդելավորման և չափագրական աշխատանքներով, իսկ երրորդը՝ նա կրթում և դաստիարակում էր ուսանողներին և ապագա մասնագետներին: Թ. Գևորգյանը երկար տարիներ զբաղվել է Հայկական միջնադարյան ճարտարապետությամբ, որը մեծ տեղ էր գրավում իր մասնագիտական նախասիրություններում: Հետազոտելով հայկական ճարտարապետական հուշարձաններում ամփոփված չափային համակարգը և դրա կիրառումը, վերլուծելով հատակագծման և ծավալատարածական հորինվածքի համաչափական կարգերը՝ Թ. Գևորգյանը գրեց «Հայկական ճարտարապետության համաչափությունները» մենագրությունը, որը պատասխանում է ճարտարապետության պատմությամբ և տեսությամբ զբաղվող մասնագետների բազմաթիվ հարցերին: Թելման Գևորգյանի նախագծերով Երևանում իրականացվել են «Մոսկվա» ամառային կինոթատրոնը, ՀՀ

Կառավարության վարչական շենքը («3-րդ կառավարական տունը»), Դիլիջանի ազգագրական ճարտարապետական թանգարան-թաղամասը: Արխիվի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, թե որքան բազմազան ճարտարապետական ժանրերում է աշխատել հեղինակը: Ֆոնդն ստանալուց անմիջապես հետո թանգարանում կազմակերպվեց ցուցադրություն՝ նվիրված Թելման Գևորգյանին, որը բացահայտեց նրա մինչ այդ օրերը չցուցադրված նախագծերը: Դրանք տալիս են պատկերացում Թ.Գևորգյանի ինքնատիպ ճարտարապետական տաղանդի մասին: Հեղինակի մեծաքանակ և հարուստ ֆոնդը, որում առկա են բազմաթիվ գծագրեր, ճարտարապետական էսքիզներ, գիտական ուսումնասիրություններ, լուսանկարներ, մասնագիտական գրադարան, սպասում է հետաքրքրվող մասնագետ-հետազոտողներին: Հավաքածուի հաշվառմամբ և դասակարգմամբ սկիզբ դրվեց արխիվային աշխատանքների, ինչպես նաև զուգահեռ ընթացող թվայնացման աշխատանքների գործընթացին:

Անցնելով եզրակացությանը և ամփոփելով այս հոդվածի հիմնական դրույթները՝ մեջբերենք ամենախոշոր թանգարաններից մեկի՝ Ռուսական Էրմիտաժի տնօրեն, դոկտոր Բորիս Պիոտրովսկու խոսքերը: Նա հաճախ էր ասում. «Թանգարանի սիրտը նրա ֆոնդն է»: Մենք էլ ենք փաստում այն, որ առանց ֆոնդի և արխիվի հնարավոր չէ զբաղվել այն կարևորագույն մշակութային և ազգապահպան գործով, որի նպատակն է պահպանել, դասակարգել, ուսումնասիրել և հանրահռչակել այն հսկայական ժառանգությանը, որ պահվում է Ալեքսանդր Թամանյանի ճարտարապետության ազգային թանգարան–ինստիտուտում:

Ruzan Kurtanjyan
Researcher
National Museum-Institute of Architecture after Alexander Tamanyan
kurtanjyanruzanna21@gmail.com

A NUMBER OF ISSUES RELATED TO THE STUDY OF THE ARCHIVAL MATERIALS OF THE MODERN PERIOD OF THE FUNDS OF THE AL. TAMANYAN MUSEUM-INSTITUTE OF ARCHITECTURE (MIKAEL MAZMANYAN, RAFAEL ISRAELYAN, TELMAN GEVORGYAN)

Keywords: architecture, heritage, fund, digitization, electronic archive, study

Architectural museums around the world are of particular interest, as the nature of the material exhibited in them is directly related to the architectural heritage that expresses the thinking of the people of a given country. Through this material, it is possible to get acquainted with and observe the different stages of the development of society, the development of evolutionary, engineering, constructional, architectural, and design ideas, as well as the styles, achievements, and changes prevailing in the field of architecture during a given period. In Armenia, in the city of Yerevan, we have such an architectural museum, unique in its nature — the Alexander Tamanyan National Museum-Institute of Architecture. The funds acquired recently are important for our museum activities and are extremely interesting. The scope of interest is extensive and needs study by practicing architects, architectural theorists, future architects, and, of course, ordinary museum visitors.

Рузан Куртанджян
научный сотрудник
Национальный музей-институт архитектуры им. Александра Таманяна
Kurtanjyanruzanna21@gmail.com

РЯД ВОПРОСОВ, СВЯЗАННЫХ С ИЗУЧЕНИЕМ АРХИВНЫХ МАТЕРИАЛОВ СОВРЕМЕННОГО ПЕРИОДА ИЗ ФОНДОВ МУЗЕЯ-ИНСТИТУТА АРХИТЕКТУРЫ ИМ. АЛ. ТАМАНЯНА (МИКАЭЛ МАЗМАНЯН, РАФАЭЛ ИСРАЕЛЯН, ТЕЛЬМАН ГЕВОРГЯН)

Ключевые слова: архитектура, наследие, фонд, оцифровка, электронный архив, исследование

Архитектурные музеи во всем мире представляют особый интерес, поскольку характер экспонируемых в них материалов напрямую связан с архитектурным наследием, выражающим мышление народа данной страны. Благодаря этим материалам можно познакомиться и проследить различные этапы развития общества, развитие эволюционных, инженерных, строительных, архитектурных и дизайнерских идей, стили, достижения и изменения, преобладающие в области архитектуры в данный период. В Армении, в городе Ереване, есть такой уникальный по своей сути архитектурный музей – Национальный музей-институт архитектуры имени Александра Таманяна. Приобретённые в последнее время фонды важны для нашей музейной деятельности и чрезвычайно интересны. Сфера интересов обширна и требует изучения как практикующими архитекторами, так и теоретиками архитектуры, будущими архитекторами и, конечно же, обычными посетителями музея.